




Տարեկան գինն է 6 Արծաթ Մեծիտի:
Վեցամսեայ 3 1/2
Մեկ ծանուցումն տողին 2 դուրուշ է
Ստորագրութիւնները կանխիկ են:
Ստորագրութիւնները ամեն ամսայն 1ի
էւ 15ին կը սկսին:

Դուք երբայիք լրագիրներուն նամբու
ծախքը առնողին վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ
եւ ինչ գրութիւն եմբագրին պիտի
ուղղուի. եւ ասոնց նամբու ծախ
քը խրկողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 11 ՄԱՅԻՍ

ՊՈՐՍԱՅԻՆ ՀՆՈՒԱՐԱԿԱՆ

Ի ՌԵՐԵ

Մարտի 16 մայիս.

Յորեն կիջայ, 125, — Գանուբ, 28 30,
— Յոնո 69 45, — Քոնստանտին 92 1/8, — Օս-
մանեան նոր փոխառութեան բաժինները 547
Քր. 50:

Լոնտրոն 18 մայիս.

Արմաիք աղէկ կը համին: — Եգիպտոս-
ցորեն 52-55 50, Գարի 24 6, — Օսմանեան Բոն-
սոյի 54 1/8 չափ ամուսն:

Պանքան իր դրամագիւղը հարկերն երեք
ու կէսի հանց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայի հասարակաց կարծիքն այս
օրերս մեծ յուզման մէջ է Եւրոպայ ար-
տաքին գործող պաշտօնէին մէկ ամենա-
բանութեանը պատճառաւ, որուն մէջ
Լեհաստանի խնդրոյն բացարձակ լքում
մը կը տեսնուի Եւրոպայ կողմանէ:

Լոնտրոյի վաճառականներն ու սեղա-
նաւորները քաղաքագետին պարտք ժողով
մը ընելով ի նպատակ Լեհաստանի արեւ-
տաքին մի ստորագրելու և խորհրդարանին
մատուցել էին:

Լորտ Ռոյսը (Եւրոպայ արտա-
քին գործող պաշտօնէին) իշխեալ աղեր-
սագրելու ամբիւն հետեւեալ յայտարարու-
թիւններն ըրաւ, որ խորին արտաքին իւր
պատճառելի Լեհաստանի բարեկամներուն
և կրնայ ըսուիլ համայն աղատասիրաց:

« Զեմուգեր, ըսաւ, որ եւրոպական
տէրութեանց կողմանէ ի նպատակ Լեհաս-
տանի եղած դեպքանական միջնորդութիւ-
նն ու անոր արդիւնքը վարդի գոնով
տեսնուի. բայց չեմ ալ ուզեր որ Լե-
հաստանի ժողովուրդը մտքէն անցունէ
կրեք թէ Եւրոպայ իրեն համար պէնք
կառնու և դեպքանական միջնորդութեան
զատ ուրիշ բան մը կրնէ: »

Եստի ըսելէ ետեւ լորտ Ռոյսը վստա-
հութիւն կը յայտնէ Ռուսիոյ Ս. Ս. Ս. Ս. Ս.
սանգր կայսեր անկեղծութեանը վրայ, և
կ'աւելցնէ թէ Լեհաստանի մէջ խաղա-
ղութիւն հաստատելու առաջին պայմանն
է՝ երկրին քաղաքական և դատաստանա-
կան վարչութիւնը վստահութեան արժա-
նի մարդոց յանձնել, և Լեհ ժողովուրդ-
եան կողմէն ընտրուած աղաքային երեսփո-
խանական ժողով մը հաստատել: Ասկէց
աւելի բան մը արտասել խորել է Լեհաս-
տանը և Եւրոպան: Եւրոպայ ասոնք խնդ-
րելէ աւելի բան մը չկրնար ընել: »

Լորտ Ռոյսը այս յայտարարութիւն-
ներէն կը հասկցուի թէ Եւրոպայ ու Գաղ-
ղիայ կառավարութեանց մէջ կարծեաց
համաձայնութիւն չկայ Լեհաստանի խնդ-
րոյն նկատմամբ և երկուքն խորհուրդն
ու նպատակը տարբեր են իրարմէ: Գաղղիա
կերելի թէ իր միջնորդութեան ապարդիւն
եղանակէն չպիտի կրնայ հանդուրժել: Լե-
թիւքի տապալման գործը բարեկամական
միջնորդութեան սահմանէն դուրս ելած
չէ, բայց նշաններ կան որոնք յիշեալ տե-
րութեան կողմէն զինուորական միջամ-
քի թէ արգահով և զսնայեցիկ լուծու-
մը կրնաւ ընել:

տութիւն մը հաւանական կրնան:

« Բաղադրական անցքերուն ընթաց-
քին ուշադրութեամբ դիտողները կրնան
նշաւել, կրնէ թաւել, որ Լեհաստան ա-
միջոցին նոյն բացարձակ վստահութիւնն
ունին Գաղղիայ ձեռնառութեանը վրայ
որն որ Սարտենեայիք ունէին Խաղղիայ
պատերազմին մէկ երկու ամիս առաջ:

« Եւս վստահութիւնն անշուշտ տար-
տամ յոյսէ մը աւելի գորաւոր բանի մը
վրայ հիմնեալ պէտք է ըլլայ: Եւրոպայ
Փարիզէն հարցում եղած է Լեհաստա-
նի արտաքինութիւնը վարող դադանի
յանձնաժողովին, թէ ազատամբները կըր-
նա՞ն տակաւին երկու ամիս զինմաւ, և
« այո՞ » պատասխան եկած է:

« Եւրոպայ ամեն մէկ մասն արդէն ան-
շուշտ, և Լեհաստանի ազատամբութիւնը՝
փոխանակ զապուշուր՝ մեծապէս ընդար-
ձակեցաւ:

« Կանադայի խնդրուած է որ մինչ-
դեռ մէկ կողմանէ ջանք կըլլայ համոզու-
թեան և Եւրոպայի որ Գաղղիայ հետ
միաբան գործեն, միւս կողմանէ Եւրոպե-
ան կայսրը կը պատրաստուի՝ եթէ հարկ
ըլլայ իր նպատակին միայնակ աշխատելու:

« Եւրոպայ Եւրոպայի կայսրն Եւրոպայի
Տաճարատանի և Սարտենեայի հետ միա-
բանութեամբ Գաղղիայ պատերազմին ըրաւ,
երկիր ձեռք բերելու աչք չունեցաւ:
Բայց երբ որ միայնակ Խաղղիայ դեպք, հե-
տեանքը Կիսայի և Սափայի դաւա-
նեան Գաղղիայ հետ միանալը եղաւ:

« Եւստի թագաւորը պիտի և հո-
գով լեհացեաց հետ է: Եւրոպայ ալ պատ-
րաստ կերելի թագաւորին ետեւէն երթա-
լու: Տարակոյս չկայ որ Գաղղիա Ռու-
սիոյ դէմ պատերազմ բանարու ըլլայ նե՛:
Եւստի ալ Գիւնիստիան վերադառնալ
բերելու պայմանաւ կը միանայ անոր հետ: »

Հարաւային Ռուսաստանէն եկած
յուրերու նայելով ռուսական Լեհաստա-
նի բոլոր հին դաւաճաններն ալ ուրք ելել են, և
ապստամբութիւնը մինչև Օսթայի տան
և հինգ մըն մնալով արարածուր է:

Բաղադրութիւն ռուս հրամանատարներ
օրէ օր ապստամբաց հետ կը միանան, և
լեհացիք նշանաւոր յաջողութիւններ ձեռք
կը բերեն եղեր ռուսաց զօրքերուն դէմ:

Եւրոպական Մօնիթին Բոսթ լրագիրը
կը ծանուցանէ թէ Յունաստանի խնդրոյն
համար կազմուելիք դեպքանաժողովը քա-
նի մը օրէն պիտի բացուի Լոնտրոյի մէջ:

Պալիկայի կառավարութեան առա-
ջարկուած է որ Օթոման թագաւորին Յու-
նաստանի դահէն հրաժարուի որչին դեռ
պատճառովն ներկայացնէ. և թէ որ այս
առաջարկութիւնը ընդունին, մեծ տեղութե-
թիւններն Օթոման Յունաստանէն վը-
սընտուելով օրինաւոր պիտի հրապարակեն
և Տանիմարայի կիսով իշխանին ընտ-
րութիւնն ալ պիտի հաստատեն:

Բանի մը դժուարութիւններ, մանա-
ւանդ նոր թագաւորին որդեգին յունական
կրօններէն մէջ դաստիարակուելու խնդիրը
զիւրացած են. միայն դանձալին կարգա-
րութեան վերաբերեալ մէկ քանի որո-
շումներ կան ըլլալիք, որոնք կը յուսաց-
ն թէ արգահով և զսնայեցիկ լուծու-
մը կրնաւ ընել:

մը կրնաւ ընել:

Երբ որ դեպքանաժողովը պաշտօնական
կերպով վաւերացնէ Յունաստանի մէջ
եղած փոփոխութիւնը, Յունաստանէն դա-
յոյ պատգամաւորները՝ որ Բօքէնհայ
կը դանուին՝ արքունի թագը պիտի մա-
տուցանեն կիսով իշխանին, որ Եւրո-
պայի հաճութեանը համաձայն հանդիսա-
ւոր կերպով Յունաստանի թագաւոր պի-
տի հրապարակուի:

Լոնտրոյի մայիս 7/19 թուով հե-
րագրաւոր մը կը ծանուցանէ թէ Եւրո-
պայի Միացեալ Նահանգաց Գրեյտե-
րիքաւորի քաղաքին մօտ մեծ և արիւն-
ուշտ պատերազմ մը եղեր է, որուն մէջ
հիւսիսականք յաղթուել են՝ երկու կող-
մանէ ահաղին կորուստ ընելով:

Մէքսիկայի եկած վերջին լուրերէն
կիսապիտի թէ Մէքսիկայեաց Բուէպա-
անուն մեծ և հզոր քաղաքը Գաղղիայի
առեր են սաստիկ պատերազմով մը, և մի-
այն երկու բերդ մնացեր է, զորոնք առանց
պատերազմի կրնան առնուլ:

Եւս քաղաքին առնուելով կը դի-
րանայ Մէքսիկայի մայրաքաղաքին ալ ա-
ռու՞մը, վստի պէ քանի մը միոն միայն հե-
ռու է Բուէպայէն, և անոր չափ ամ-
բութիւնն ալ չունի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի օրը պատերազմական
գործող պաշտօնեայ Բարձր. Պոլաւո փա-
շային արարանքը յանձնաժողով մը կազ-
մուեցաւ տէրութեան դանձալին վիճակը
քննելու և ելեմտական հաշիւները կար-
գաւորելու համար:

Եւս յանձնաժողովին ներկայ էին տե-
րութեան նախարարներէն շատերը և ու-
րիշ բարձրաստիճան պաշտօնատարներ ու
հաշուաւորներ:

Ս. Պոլաւո մարտական ներկայ 1863
աւարտայ եռամեայ հաշիւներն անցեալ
տարուան եռամեայ հաշիւներուն հետ
բաղդատելով կը տեսնուի որ տէրութեան
եկամայից այս ձիւղը մեծապէս մարբե-
րութիւն ունի անցեալ տարուան վրայ:
Օրինակի համար այս տարուան յունուար
ամսոյ մարտական մուտքն եղած է 4295,
758 զուրուշ, առանց հաշուելու ողբելից
ընդլեւայ և ծխախոտի առուրը, մինչդեռ
անցեալ տարուան յունուարի մուտքն և-
ղած էր 1327,299: Կանադայէն անցեալ
տարուան փետրուարի մուտքն էր 1664,
958 զուրուշ, այս տարուանն է 4385,
614 զուրուշ: Եւս տարուան մարտ ամ-
սոյ մուտքն է 4975,477 զուրուշ, մինչ-
դեռ 1862ի մարտ ամսոյ մուտքն եղած էր
2731,093 զուրուշ:

Եւս եռամեայ հաշիւն կը տեսնուի
որ տէրութեան ներկայ տարուայ մարտա-
յին մուտքն անցեալ տարուանէն գոնե
կրնապատիկ աւելի պիտի ըլլայ:

Մայրաքաղաքին Ժուռնալ լրագիրը
մօտ օրերս բացուելիք Օսմանեան կայս-
րէն:

Բախան Պանքային վերաբերեալ պայմա-
նադրութիւնն հրատարակած ըլլալով, անոր
մէջէն Պանքային գործողութեանցը վե-
րաբերեալ կարեւոր յօդուածները քաղելով
հոս կը գնենք:

Պանքան օգոստոսի 1-ին Լոնտրոյի
բարձր պաշտօնաւորութեանն և իր կառա-
վարութեան հսկողութեանը ներքեւ պիտի
ըլլայ:

Պանքային դրամադրութիւնն առաջով եր-
կու միլիոն Եւրոպայի հաղար անգղե-
ական լիւր կամ վաճառուելութիւն միլիոն
հինգ հարիւր հաղար փրանք պիտի ըլլայ,
հարիւր երեսուն հինգ հաղար փրանքի վը-
րայ, ամեն մէկ փրանք հինգ հարիւր փր-
անք, որուն կէսը Պանքան գործի սկսե-
լու ժամանակը պիտի վճարուի: Եւս դը-
րամադրութիւնը պիտի կրնայ աւելնալ՝ նոր
փրանքներ հանուելով:

Պանքան հիմնադրող ընկերութեան
արտաքինութիւնը երեսուն տարուան համար
տրուած է՝ գործողութեան սկսած օրէն
հաշուելով:

Պանքային կայսրը Ս. Պոլաւո մէջ պի-
տի ըլլայ: Բայց ուղածին չափ ձիւղեր պի-
տի հաստատուի կառավարութեան հաւա-
նութեամբ:

Պանքային վարչութիւնը երկու կամ
երեք տնօրէններու և երեք անդամէ բաղ-
կացեալ վարչութեան ժողովի մը ձեռք
պիտի կատարուի, զորոնք Լոնտրո և Փա-
րիզ դանուող հիմնադրութիւնը պիտի ընտ-
րեն: Վայսերական կառավարութիւնն ալ
իր կողմանէ վերադառնալ (նազը) մը պի-
տի գնէ, որ առանց վարչութեանը խա-
նուելու՝ տեղեկութիւն պիտի ունենայ
գործողութիւններուն, և սոյն կանոնաց
ճշիւ գործողութեանը պիտի հսկէ:
Ասկէց զատ համարակալ մը պիտի գնէ,
որ արքունի դանձուն և Պանքային մէջ
եղած գործողութեանց հաշիւները գնէ:

Պանքան իրաւունք պիտի ունենայ ըս-
տակ փոխ տալու, սենէաներու, արժեք-
ներու, վաճառքի և քոնէմաններու վրայ,
որոնք Պանքային քննութեանն ու հսկո-
ղութեանը ներքեւ պիտի դրուին: Նմանա-
պէս իրաւունք պիտի ունենայ առեւտրա-
կան թուղթեր կտրելու, աւանդներ առ-
նելու, փոխանակաւոր գնել վաճառելու,
ուրիշներու հաշուին վաճառք գնել վա-
ճառելու, վերջապէս Պանքային մը պաշ-
տօնին վերաբերեալ ամեն գործողութիւն
ներն ընելու:

Պանքան արտաքինութիւն պիտի ունե-
նայ միլիոն լիւր տոմարի հանուելու, որ ձեռ-
քէ ձեռք պիտի անցնին և ներկայացնողին
պիտի վճարուին: Եւս վճարումը Պանքա-
յին կայսրէն կրնայ պահանջուիլ: Ստիպ-
չութիւն ձիւղերուն տոմարները կրնան Ս.
Պոլաւո Պանքային վճարուիլ, եթէ Պան-
քային վարչութիւնը յարմար դատէ: Ս. Պոլ-
այ պանքային կըստ տոմարներն ալ ձիւղե-
րէն կրնան վճարուիլ: Պանքային վարչու-
թեան հրամանաւ և որոշելիք պայմաններ
ըով: Պանքային տոմարները դրամի պէս
պիտի շրջաբերին իրենց եղած տեղերուն
սահմաններուն մէջ, և ամեն տեղ տէրու-
թեան անտուրներէն ընդունուին՝ կառա-
վարութեան հետ պէտք եղած պայման-
ները որոշուելէ ետեւ:

Պանքային առեւտրները առձինքն

ընդունաւ պիտի լընայ, և երկու հարիւր
գումարեցնէն վար տունակ չպիտի ելնէ՝
տունաց կառավարութեան համաձայնեալ:
Տոմարները կառավարութեան կողմանէ
գրուած վերատեսչին կնիքը և վարչա-
թեան անգամներէն յատկապէս որոշեալ
մէկու մը տարադրութիւնը պիտի ու-
նենան:

Պանքան գործի սխառ օրէն մինչև
երկու տարի՝ իր հանած տոմարներուն
դռնէ կէսին հաւատարմեացեալ գրամ
պատրաստ պիտի ունենայ միշտ իր սըն-
տուկներուն մէջ, և երկու տարիէն ետե
դռնէ երրորդ մասին հաւատարմ պիտի ու-
նենայ:

Կառավարութիւնը կը խոստանայ որ
Պանքային արտօնութիւնը որչափ ժամա-
նակ որ կը տեւէ (30 տարի), բնաւ որ և
իցէ տեսակ թղթադրամ չհանէ: ու ալ
սոյն արտօնութիւնն ունեցող ուրիշ Պան-
քա մը հաստատուելու հրաման տայ:

Պանքան Կ. Պոլսոյ մէջ տեղութեան
ամեն զանազայն գործողութիւններն իւր
վրայ պիտի առնու. այսինքն մէկ կողմանէ
տեղութեան դանձր գալիք բոլոր եկամուտ-
ներն ինք պիտի գանձէ, և միւս կողմանէ
եղեմայն պաշտօնատուներն իր վրայ քաշ-
ւած բոլոր վճարքները պիտի ընէ:

Պիտի կրնայ նաև Իգլիկի, Տրապի-
զոնի, Պէրսիայի և Մէսիդիոյ մէջ՝ ուր
առջև օրէն ձիւղեր պիտի հաստատէ, և
իւրեք պաշտօնատուներ կողմանէ իրեն նշա-
նակուած դաւառական եկամուտներն ըն-
դունիլ: Կառավարութիւնը պիտի կրնայ
նոյն պաշտօնը յանձնել իրեն նաև այն
տեղերը՝ ուր Պանքան ետքը ձիւղեր հաս-
տատուէ:

Պանքան պիտի կորսէ Ելեմայն պաշ-
տօնատուներն միայն երբ Մէրիկները, ու
րոնք հաստատ վճարող պիտի ունենան
որ իննսուն օրը չպիտի անցնի, և տոկոս
պիտի ունենան որ հարիւրնիւնգէն աւելի
չպիտի ըլլայ: Պանքան այն Մէրիկները
վճարողին պիտի դռնէ ստացած արքունի և
կամուտներովը, և երբոր եկամուտները
չաւան, աւելցնել կառավարութեան
համար բացած հինգ հարիւր հազար լիւրա
վարկին (քուէտի) հաշուին պիտի անցու-
նէ:

Պանքան մասնաւորապէս իր վրայ պի-
տի առնու տեղութեան ներքին պարտուց
տոկոսին և գլխամասին վճարքը, և տրու-
քին պարտուց տոկոսին և գլխամասին վճ-
արմանը յատկացեալ գումարներն ալ իւ-
րենց տեղը պիտի հասցնեն: և այս երկու
վճարքներուն համար ալ հարիւրին մէկ
քօսիմոն պիտի ընդունի: Տէրութեան
զանձուն համար ընելիք վերալիշեալ գոր-
ծողութեանց համար ալ տարին քսան հա-
զար անդղեական լիւրա վարձք պիտի ըն-
դունի:

Պանքան կառավարութեան դրամա-
կան գործադրատար պիտի ըլլայ թէ՛ ներ-
սը և թէ՛ դուրսը: Վէշիկներուն բարձ-
մանը վերաբերեալ գործողութիւններն ալ
իր վրայ պիտի առնու, այս մասին պէտք
եղած միջոցները կառավարութեան հետ
որոշելով:

Կառավարութիւնը Պանքայի շէնքին
շինութեան համար պէտք եղած գեանիները
հրկապէս վարձու պիտի տայ Պանքային,
և արտօնութեան ժամանակը լրանալուն
կառավարութիւնը պիտի տիրէ այն տեղին
շինութեան ծախքը վճարելով: Կառավա-
րութիւնը հետ եղածին չափ պիտի դիւրա-
ցնէ Պանքայի ձիւղերուն շինութեանը
համար հարկաւոր եղած տեղերը: և թէ՛
մեծ Պանքային և թէ՛ անոր ձիւղերուն
ապահովութեանը համար անհրաժեշտ
եղած զինուորական պաշտպանութիւնը պի-
տի շնորհէ:

Պանքային կորսել տրուելիք արժե-
թուղթերը դռնէ երկը պատու աւոր ստո-
րադրութիւնն պիտի ունենան և վճարողին
ալ իննսուն օրէն աւելի պիտի չըլլայ: Եւ
րոնք տարադրութեան մէկը պահպան եղած
ժամանակ՝ անոր տեղ առհաւատեցայ (ըն-
հին) կրնայ տրուել:

Պանքան չպիտի ընդունի այնպիսի ար-
ժեքային, փոխանակալիս կամ մուրհակ՝ ու

րոնք տեղութեան դրոշմովը վաւերացած
չեն:

Վեն ամիս իր հաշուեկշիւը պիտի
չնէ և Կ. Պոլսոյ լրագրիներուն մէջ պի-
տի հրատարակէ:

Պանքային բաժանորդներն իրենց դր-
ւած բաժիններուն գումարին չափովը մի-
այն պատասխանատու են:

Բաժանորդաց Բնդ հանուր ժողովը կը
բաղկանայ այն ամեն բաժանորդներէն՝ ու
րոնք դռնէ երտուն բաժին առած են:

ԱԶԳԱՅԻՆ

Սահմանադրութեան գործադիր Զանձ-
նաժողովոյ առաւած հրահանգացը համա-
մատ մայրաքաղաքիս թաղերուն մեծ մա-
սին մէջ ընարգացական ցանկերը երկու շա-
բաթէ ՚ի վեր շինուած լինցած են, և ա-
մեն մարդ անհամբերութեամբ ընտրողա-
կան գործողութեանց կատարուելուն կըս-
պասէ՝ որպէս զի ժամ առաջ կանոնաւոր
վարչութիւն մը հաստատուելով՝ Վրդէ իր
ներկայ տաղանդաւորն վիճակէն աղտոյի:

Բժաշկաբար մայրաքաղաքիս թա-
ղական խորհուրդներն ոմանք (երկու կամ
երեք), ընդհանուր ազգին այս օրինաւոր
բազմապէս ու ակնկալութեանը արգելք
կըլլան անհիմն զիտողութիւններ ընելով
գործադիր Զանձնաժողովոյ հրահանգացը
դէմ, և զանոնք անգործադիր թողով:

Եւստիպի անարգարանակ ընթացքի մը
վրայ որ ներքին ապօրինաւոր կամ յետա-
դէմ դիտողներու արտաքին պատրուակ մը
կը թուի մեր կողմէնք անաշտ խորհրդա-
ծութիւն մը ընել, բայց մեր ընելիքը բոս
մասին կատարած է ուսումնական ար-
ժանապարհ բարեկամի մը հետեւեալ նա-
մանը՝ զոր ողջափա հասարակութեան ու-
շադրութեանը կը յանձնեն:

Մեծարդոյ խմբագիր Մատիս պատուա-
կան լրագրոյ:

Բաղադրական անուրանալի ճշմարտութիւն
մ'է՛ որ ազգային դարձմի ճիւղարկութեամբ
ընտրուած երեսփոխանական ժողով մը բոլոր
ազգին կամքը կը ներկայացնէ, անոր վստա-
հութիւնը կը վայելէ և բացարձակ իշխանա-
կան գործութիւն մը ունենոյն ազգին վրայ: Աղ-
ղը անոր վրայ սահմանադրապէս որոշուած
պաշտօն մը կուտայ, և կը պահանջէ որ նոյն
պաշտօնը բոս օրինաց կատարէ՝ զանի պատա-
խանաւու ճանձնալով:

Առհասարակ հայերը Սահմանադրական
վարչութեան մը վրէժը ժամանակ վիճակե-
լով այս ճշմարտութիւնը փորձով ըմբռնած են,
և իրենց ազատ կամօքը ծնած ժողովի մը կա-
ռուցութիւնը և բարձր խորհուրդը կը ճանչ-
նան: Սակայն զարմանք որ կան այնպիսի հա-
յեր ալ, որ կամադիրութիւնէ կամ գլխավոր-
ութիւնէ տակաւին այս սկզբունքը չը իտեն կամ
հանդիմալ չեն ուզեր:

Բնականապէս մեր խօսքը Սահմանադրու-
թեան գործադիր Զանձնաժողովին վրայ պիտի
դառնայ, շեռուէն մեր խնցած իննսուկով՝ այս
ժողովը քանի որ հաստատուել է, չի յուսա-
րուած մէկ քանի տեղերէ՝ զիտադրութեան և
անվստահութեան նշաններ կը տեսնէ: Սահ-
մանադրութեան գործադիր Զանձնաժողովին
պաշտօնն է անոր էական արամադրութիւննե-
րը գործադրել և ազգային նոր Վարչական
մարմին մը կազմել: Այս գործը որչափ ծանր,
այնչափ ալ փափուկ է՝ ազգին անիշխանու-
թեան յետ մէկ և կամ տարած և և երկարակ
վիճակին նայելով: Հետեւապէս ոմանք՝ Սահ-
մանադրութեան այս ինչ կէտը գործադիր Զանձ-
նաժողովը գործադիր իրաւունք չունի կը-
սին, ոմանք՝ պէտք է որ ազգի թաղական խոր-
հուրդը չգտնի կըսեն, այլ իւր գործը ընդլը-
րուոր հրահանգ մը գրէ, երեսփոխանութիւն-
նը հաստատել և լուծուիլ է կը քարոզին, ու-
րիշներ ալ Թովմա առաքելոյն թեոհաւա-
տութիւնը իրենց կամին լուծելով՝ «Մինչև որ
Սահմանադրութիւնը չի տեսնու և մասն վը-
րան չի կոխու» Զանձնաժողովին հրահանգին
ակնաջ չեմ կախեր» կը պոստ. ոմանք ալ՝
եթէ ճշմարտանման պատճառ մը չկուն մէջ
բերել, իրենց տրուած հրահանգները չի հա-
կընալ կը ձեռնան:

Նախ կը լսէինք որ Սահմանադրութեան
գործադիր Զանձնաժողովին մէջ կարծեաց տա-
րաձայնութիւն կայ անոր գործադրութեանը
կատարմը: հիմա հասարակութեան մէջ պը-
տաւոր տարաձայնութիւններ կը լսենք, որ

խիտացաւ, փնասակար և ապօրինաւոր են
«Գննեք» ցայ տարաձայնութեանց շարժա-
ռիթը: Եւնէ ըսել կողմէն անոնք որ Սահմա-
նադրութիւնը հրատարակելէ առաջ միջոց տըր-
ւած հրահանգներն անընդունելի են կըսեն:
Ասոնք կողմէն անշուշտ որ Սահմանադրու-
թիւնը ապուած տեսնեն և բազմապէս իրենց
տրուած հրահանգին հետ, այնպէս որ եթէ
հրահանգը Սահմանադրութեան համաձայն
դանեն, զայն գործադրեն, ապա թէ ոչ բողո-
քեն Այս փափաքը՝ որ առ երեւոյթս օրինա-
ւոր կը թուի, կը նմանի այն մարդուն փափա-
քին, որ նաեւ մը կը զնէ և առանց նաւական
համութիւն ունենալու, ինքզինքը նաւաւոր
տեսնելով՝ նաւապետ ալ կը կարծէ: Սահմա-
նադրութիւնը Ազգինն է. սակայն գործադրի-
չը բողոք ազգը չէ և չկրնար ըլլալ. իշխանու-
թիւն մը պէտք է որ անոր գործադրութեանը
հակ. այս իշխանութիւնը գործադիր Զանձնա-
ժողովն է, որ կամ վստահութեան արժանի է՝
կամ ոչ. եթէ ոչ ինչո՞ւ համար ազգը զայն
ընտրեց, և չառնին անոր անօրէնութեանց կը
հնազանդին. եթէ է՝ ի՞նչ կը նշանակէ ոմանց
հակառակութիւնը՝ եթէ ոչ ապատարան
կամ անիշխանապետութեան յարժու մը:

Ի հարկէ աղէն ալ իրաւունք ունի հակ-
ու գործադիր Զանձնաժողովին ընթացքին վը-
րայ, որպէս զի անսահմանադրական քաղ մը
չառնու, և ասոր համար ապեալ Սահմանադ-
րութիւնը ձեռքը ունենալու է: Սակայն այս
հակադրութեան արդիւնքն ալ իր ներդրումը
թեան ժամանակն ունի. ապա թէ ոչ պէտք
է ըսել որ Զանձնաժողովին իր երեսփոխանա-
կան կերպարանքը կորուսած և լոկ գործիք
մը դարձած կըլլայ այն ամենայն կուսակցու-
թեանց առջև, որոնք Սահմանադրութեան
տրամադրութիւններն ըստ քմայ բացատ-
րելով՝ յարաժամ ըսողք և արժուի բառնալու
տրամադրութիւնն ունին: Սակեց զատ՝ մի-
թէ Բնդ հանուր ժողովը գործադիր ժողովը
ընտրելէն ետեւ անոր առջև պայման մը գրան-
միթէ ըսած անոր «Ան զձեզ ընտրելի սա
պայմանաւ. որ ձեռքերը կապես նստիս, և
կամ Միւհէնտիսեան ապարանին դրաշարնե-
րուն վրայ հակոյտութիւն ընես և մինչև որ
Սահմանադրութիւնը տպագրուելով չհրատա-
րակուի՝ ձեռն ՚ի գործ չդարնես»: Վասն զի որ-
չափ որ քու վրայ վստահ եմ, կը վստահու որ
ինձի խաղ մը կը խաղա և կը խաբու:» Արդ-
եօք այսպիսի անհիմն ինչ պայման մը կայ: Արդ-
եօք գործադիր Զանձնաժողովին հրահանգնե-
րուն միտ չդնող քաղաքագէտները կրնան են-
թադրել որ այնպիսի տարօրինակ պայմանա-
ւորութեամբ ժողով մը կազմին հնարին ըլլայ:
Արդեօք զիւրին քան է որ ազգին առջև իր վրայ
դարձանող, անոր վստահութիւնը վայելող,
ազգափորձութեան ու պատասխանատուութեան
նշանակութիւնը քաջ ճանչցող և ազգին ու
տեղութեան առջև մեծ պարտք մը կատարող
ժողով մը՝ ամեն մարդկային զգացում և պա-
տիւ անդունէ, իւր ուսմանը գտէ, և ազգին ու
տեղութիւնը խաբէ: Սահմանադրութեան
տրամադրութիւնները չարաչար գործածելով
Այսպիսի ոճի մը գործելու համար պէտք
է որ հին և նոր Սահմանադրութիւններն և
Բ. Դրան արձանագրութիւններն անհետացած
ըլլային, և կրկին Զանձնաժողովը անդամոց
յիշողութիւնը խանդաւած կամ կորած ըլլար,
ինչպէս որ սահմանադրաբար պատուաւոր անձ
մը այսպիսի անուղի պատգութիւն ընտրե-
րուն ըսել է:

Իսկ անոնք որ կը սղոյեն թէ երեսփոխա-
նաց ընտրութիւնը թաղական խորհուրդ կազ-
մութեանն առաջ պէտք է ընել, Սահմանադ-
րութեան մը տրամադրութեան վրայ կը հիմ-
նեն իրենց կարծիքը: Անտարակայս 1860 թ
Սահմանադրութեան վրայ կը դառնան, որն որ
1863 թ Սահմանադրութեան բողոքովին հիմա-
նիր: Այն ատեն ընտրողութեան իրաւանց սահ-
ման չկար, այսինքն թէ թաղական և թէ և-
րեսփոխանական ընտրութիւններն ընդհանուր
քուէարկութեամբ հաստատուած էին. իսկ այ-
սօր ոչ միայն ընտրողները երկու կարգի բաժ-
նուած են, այլ և սահմանադրապէս, այսին-
քն թաղեցող կողմն ընտրուած թաղական
խորհուրդներով ընտրողական ժողովներ պի-
տի կազմուին, որ երեսփոխանական ընտրե-
նաց ցուցակները պիտի պատրաստեն և անոնց
ընտրութեանը պիտի հակեն ըստ Սահմանադ-
րութեան:

Հետեւապէս եթէ ասոր հակառակ ընթացք
մը ընտրուի, չատ մը անկանոն գործողու-
թեանց դուռ պիտի բացուի, ինչպէս որ փո-
քով օրինակը տեսանք քանի մը թաղերու մէջ
կըր թաղական ընտրեցող ցուցակները պատ-
րաստուեցան: Այնպիսի թաղերու ընտրու-
ղական ժողովները՝ խիտ կարծ ու կարուկ

միջոց մը գտան ընտրեցող ցուցակները չինե-
լու համար. պարզապէս ինքզինքնին ընտրե-
ցին և ինքզինքնին արժանի տեսան թաղա-
կան խորհրդականութեան հետեւ: Ներկայա-
նալու: Եթէ միւս թաղերէն առ գործադիր
Զանձնաժողովին կ'առ ցուցակներն ալ նոյն
ողուով չինուած են, կը հրաւիրեմ անոր ուշադ-
րութիւնը այս կէտի վրայ, և այժմէն կը դու-
շակեմ որ եթէ երեսփոխանաց գանկերն ալ ու-
րէ ընտրողական խորհուրդ միջոցաւ պիտի պատրաստը-
ւին, տարակույս չկայ որ թաղական Խորհուր-
դներն հետեւին ինքզինքնին երեսփոխանա-
կան ընտրելի պիտի ընծային: Իրաւ է որ ընտրող
այս ցուցակներէն դուրս եղող անձանց ալ քը-
ւէ տալու իրաւունք ունին, սակայն փորձա-
ռութեամբ դիտենք որ տան ընտրողէն դը-
րեթէ ութը ցուցակին կը հետեւին և զըր-
սէն ընտրելի դանկու կամ ժամանակ չեն ու-
նենար և կ'ան ծանօթութիւն: Այս փորձը
բաւական ապացոյց մը պիտի ըլլայ օրինա-
ւոր թաղական խորհուրդներէ բաղկացեալ
ընտրողական ժողովներ կազմելու, երես-
փոխանական ընտրեցող ցուցակները չինել
տալու և հակողութեան գործն առնող յանձնե-
լու անվստիք կարեւորութեանը, որով ընա-
կանապէս հարկ կըլլայ որ նախ թաղական խոր-
հուրդներն ընտրուին և ապա երեսփոխանու-
թիւնը: Եթէ պէտք է արդէն չատ մը թաղեր այս
բանին համադրուած են, սակայն ոմանք ասոր
հաճութիւն չունենալու. ապօրինաւորութեան
միտ կը տեսնեն արդ թաղական խորհուրդնե-
րն անվստիք կարեւորութեանը:

Բայց այս թաղական խորհուրդները՝ որ
բայեք զարգացար սակաւաթիւ են, ինչո՞ւ հա-
մար նոր քուէարկութեան մը կը վստահու: Կամ
օրինաւոր են՝ կամ չեն. եթէ օրինաւոր թաղա-
կան խորհուրդներ են, ըսել է որ թաղին հա-
մարումն ու վստահութիւնը կը վայելին, և
անտարակույս նորոգ ընտրութեան ատեն վե-
րապիտ իրենք պիտի ընտրուին և հետեւաբար
քուէէնք արդ ինքքէն վստ մը չպիտի ունենան:
Իսկ եթէ չընտրուին, ըսել է ոչ կամ ապօր-
ինաւոր են և կամ թաղին վստահութիւնը կո-
րուած, և հետեւաբար յանրապի կը վարեն
իշխանութիւն մը, յորմէ դատուելու տնաճու-
թիւն ցոյց տալով, զանի չարաչար և ՚ի վրաս
թաղեցող գործածելու ալ հակում մը յայտ-
նած կըլլան և իրենց անուան պատիւ չեն ըն-
եր:

Բայց դարձեալ այս կէտը գործադիր Զանձ-
նաժողովին դիմաւոր. բանն է. եօ լոկ իմ ա-
ռաջին կարծիքս յայտնելով կը կրկնեմ՝ որ միշտ
այն կողման կը միտիմ ուր որ ակզուրք մը
ընդհանուր և հետեւապէս ճշմարիտ և հիմ-
նական կերպարանք մը կ'զգենու: Այս կեր-
պարանքը՝ նոյն իսկ ընդհանուր քուէար-
կութիւնն է, որ անսահման և ամեն քանակ
հինգ տարին լրացնող անհատին մասնակի:
Արդ՝ ըստ Սահմանադրութեան թաղական խոր-
հուրդներն ընդհանուր քուէարկութեամբ պի-
տի ընտրուին. իսկ երեսփոխանութեան ընա-
րողութիւնը 75 զուրուշ տրոց և անձնական
արժանաւոր վրայ սահմանուած է: Հետեւապէս
առաջինն աւելի ընդարձակ և ամենապար-
հինաց վրայ դրուած է, և այս հիմը կանխա-
դայն զննել է բանաւորն ու օրինաւորը: Աս-
կեց զատ՝ երեսփոխանական ընտրութիւնը
թաղական ընտրութեանն առաջ կատարելը՝
անուղղակի կերպիւ չունեւորին իրաւունքը
յայտնակել է, իրաւունք մը՝ որ արդյական
յարգելի նախաամանց վրայ հիմնուած է: Վա-
սին զի այն որ երեսփոխանին ընտրող ըլլալու
նիւթական կարողութիւնէն դուրի է, կրնայ
չատ ազգի երեսփոխանին ընտրութեան հակող
ըլլալ, և բարոյական արժէք մը ունենալ թա-
ղին մէջ՝ որ իւրօք մեծարկի է:

Սակայն ամենին զարմանալի բանն այն է
որ ասոյն անդին պարտած տարաձայնութիւն-
ները ենթադրութեանց արդասիւք են Վասն զի
ևս չեմ կրնար առաջաժողովը մը բառնալ գոր-
ծադիր Զանձնաժողովին դէմ, քանի որ անոր
մէկ հիմնական գործը չեմ տեսած: Տեսածս
կընէ, ցուցակներ կողմէ, իւր չէք չինու
համարին թերը և տարեքը կը պատրաստէ.
և յուսալի է որ սոյն չէնքն աւարի վրայ չի
կանդներ թաղական խորհուրդ կազմութիւնը
ևս ձգելով:

Այսօրուան օրս գործադիր Զանձնաժող-
վը մեծ պարտք մը ունի կատարելիք և ար-
տաքին մասնական կարծեաց ճնշման պէտք
չէ որ ընկնի, այլ Սահմանադրութեան անիշխան
գործադրութեան միտ դնէ՝ ընդհանուր ազգին
օլուտն ու չար մտածելով: Այս կամ այն կը
զը բնաւ իրաւունք չունի անոր բռնած և հե-
տեւելիք ընթացքը վրդովելու, քանի որ ազ-

գոյնը ընդհանուր է, նոյն իսկ ազգին կենդանի կամքն է: Մեծ և փոքր պատմական և քաղաքական իրադարձութիւնները, որ ազգին հաւաքածու օրինակներ փափաքանայ ծնունդը չըլլայ: Պէտք է մտածել որ դաշինք երկուստեք նախ թիւերը տարածարի շարունակ ազգին կառավարութեան դեկը և բազմը իւր ձեռքը պիտի ունենայ, և իւր կազմութեանը համեմատ կրնայ անոր յառաջիկայ թիւան կամ կործանման պատճառ ըլլալ:

Իսկ անոնք որ կը գտնուին թէ գործադիր Յանձնաժողովը գտնուող թիւան կը զատէ, պէտք է մտածել որ անոր պաշտօնը խիստ ծանրակշիռ է և փափակ: աւելի լաւ է ծանր բայց հաստատ չինքը, քան թէ չհաստատ վեր ի վերջ: Կա մասնաւոր փոխանակ գտնուող և բոլորքն ըստնալու, իւրաքանչիւր թիւ պարտաւոր է գործադիր Յանձնաժողովին անօրէնութիւնները փութով գործադրել, քան թէ անոնց ընդդիմութիւն ընելով գործին յառաջադիմութեան խոչնդոտել ըլլալ, ինչպէս որ լատինական նայելով քանի մը թաղեր կընեն եղեր:

Մեծարգոյ խմբակի, այս խորհրդածութիւններն ձեր պատուական լրագրոյն մէջ հրատարակելով խնդրելով, միամարդանօք բարեկամը:

Կ. Պոլս 8 մայիս 1863 Ս. Կ.

Հանաք-գալէէն ապրիլ 17 թուով հետեւեալ տեղեկութիւնը կը գրեն մեզ, զոր արժանի կը համարենք հրատարակել յոյց տալու համար թէ՛ գաւառներն ինչ աստիճան մեծ բազմանք ունին և պէտք կ'զգան ազգային կանոնադրութեան մը, որոյ չըլլալէն գրեթէ ամեն տեղ ազգային գործերն անկարգ և անկարգարան վիճակի մը մէջ են:

Կանոնադրութեան քաղաքիս ընդհանրապէս ընկերութեան և ժողովրդեան ջանքերով համակարգութիւնն ու ուրախութիւնը երբ պատուական լրագրոյ մարտ 29 թուոյն մէջ Ազգային սահմանադրական կանոնադրութեան կայսերական բարեկամ կառավարութեան կողմէն հաստատուին ու շնորհուրդ, և նոյն պատուական օրինակներն մէկ քանի մասը կարգադրել:

Նոյն օրը քաղաքիս բոլոր ժողովուրդը յատկապէս ազգութեան և բարեկամութեան ընդհանրապէս ինքնապաշտօնական և ազգային Սահմանադրութեան յարտան. հաստատութեանը համար: Արդիւ օրն ալ քաղաքիս զբոսայգիական ազգութեան շարքին հաւաքու և քահանայք յետ աւարտման երկուցեայ շուրջ ջանքերով բոլոր ժողովուրդեան հետ քահանայքն դուրս պարտէ՞ մը գալին ալ և այլ ազգային երգերու ներդաշնակաւոր նուազներով, ուր հրաւիրուած էին նաեւ քաղաքիս մէջ գտնուած մէկ քանի օտար ազգաց փոխ հիւպատոսներն և ուրիշ ազգե երևելի անձինք: և հոն հաջորդեց մը պատրաստած ըլլալով ընդհանրապէս ընկերութեան միջոցաւ, մինչև զիջելուան ժամը երկուքը ուրախութեամբ անցուցնելէ և ետ իւրաքանչիւր զիր իր տունը քաղաքիս: և նոյն օրն ի օրն անձինքն քահանայքն Սահմանադրութեան գործադրութեանը համար գաւառները զբոս կուրելը հրահանգներուն, որպէս զի տեղւոյն ազգային գործերն ալ ըստ այնմ բարեկարգին: "

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արեւելեան յայտնի է ամեն ազգայնաց որ բաւական ժամանակէ ի վեր Ազգային ընդհանուր տարոյ զմարմնը գտնուան ազգային պարագայի պատճառաւ դատարան է: Այս գաղաքական ժամանակ իրաւունք ժողովը իւր պաշտօնը վարելու սկըսու և աւելորդ է մանրամասն յայտնել թէ որպիսի ներգործիւն կրնայ և տակաւին կը կրէ ազգային երևոյթան վիճակին ծանրութիւնէն: Մէկ կողմէ ազգային գործոց անօրէնութեան անընդհատ դժգոյնութեան, միւս կողմէն շատ մը պարտաւորաց խօսք հասկըցունելու հոգն ունի: Այսպէս այս օրերս Պատրիարքարանի գրաստանին վիճակը այնքան ծանրացու, որպիսիք երբ այնքան դիմուեցան, և մանաւանդ

օրական ծախուց հոգատարութիւնը այնքան դժուարացաւ, որ խառն ժողովը որոշեց մարաքաղաքի քանի մը երկրեցիներէն փոխառութիւն մը ընել քիչ մը ժամանակի մէջ վճարելու պայմանաւ: Աւստի արդէն քանի մը նշանաւոր երկրեցեաց յատուկ գործիւններ ուղղուեցան, որ փոխառութեան իրենց նկատմամբ Ազգային վարչութեան հասցունելու ազգասիրտեան հոգ տանին, և անոր այս մասին կրած բեռը թեթեւեղեն ի պատու Ազգին: Այսին զի փոխառութեան գաղաք գումարը ոչ միայն ազգային Պատրիարքարանի վերաբերեալ պարտոց պիտի գործածուի, այլ և անոր օրական ծախուց՝ որ անհրաժեշտ են: Հոստայի է որ յիշեալ երկրեցիները տոյն որոշման հարկաւորութիւնը ծանցնալով, կը փութան խառն ժողովը խնդիրը մինչև տան օր կատարելու: ապա թէ ոչ՝ խառն ժողովը պիտի բռնադատուի իւր գործը գաղաքներէն, և բոլոր ազգային գործերը և Պատրիարքարան երեսի փայ ձգել, որով կրնայ մեծ անպատահութիւններ յառաջ գալ:

10 մայիս 1863
Ի Պատրիարքարան Հայոց
Կ. Պոլս

Կանոնայէն մայիս 5 թուով հետեւեալ կը գրեն մեզ:

Կախ առաջ ձեր պատուական լրագրոյն միջոցաւ Պոլս. Տ. Ներսէս արքեպիսկոպոսին Արեւիկա գաւառէն հոն ըրած բարեկարգութիւնները մի բոս միջեւ հաղորդուած էր ազգայնոց, որոնք անտարակոյս մեծապէս ուրախացան Պոլս. արքեպիսկոպոսին անձնուէր ջանքեր եւ գերեզնի ազգասիրութեամբ գործեր բանալը, ընկերութիւններ հաստատելը, ազգային գործոց մատակարարութեանը համար կանոնադրութեանը գումարներ ընել, և ասոնք այնպիսի երկրի մը մէջ ուր մինչև յոյժմ կանոնադրութեանը, ընկերութիւն և ժողովը բաւերուն ինչ նշանակութիւն ունենալն անգամ չէին գիտեր: Պոլս. արքեպիսկոպոսին արդիւնքը միայն բարեկարգութիւններ ընել չեղաւ, այլ նաեւ գանձը այնպիսի հիման մը վրայ կանգնել, ուր յարաւել լինին: Այս բաւ ծիւղարտութեանը իւր մի մեծ ազդեցոյց Սոյ վանքին մէջ հաստատուել կրեալին գործին յառաջադիմութիւնն է: Յիշու է ալ՝ բերկրութեամբ սրտի կը տեսնել թէ նորահաստատ գործը մեծամեծ յառաջադիմութիւններ ըրած է իւր հաստատութեանէն ի վեր: Կորնիսի խորհրդէն վարչապետին անխնայ ճգամը աշակերտները քերականութեան, կրօնագիտութեան, Հայոց պատմութեան և թուականութեան և այլն մէջ գալին կերպով յառաջացած են: Բարոյ է մեզ յուսով որ քիչ ժամանակէն Արեւիկայ ազգայինը քաղաքի կ'ընթաց փոխառութեան փոխարար նշաններով լը լրատուութեամբ և նահանգիս ազգասիրի ժողովրդեան վիճակը բարեկարգեալ պիտի տեսնելը:

Ճգնադրութեան համառոտ նշանակութեամբ ընել, առանց Կահանայի նոր կուսակալ փոխադրելու ընդհանրապէս ժողովրդեան երջանկութեանն ու բարոյութեանը համար ըրած ջանքերը յիշելու: Տեղւոյս բընակիւքը անխորաքար կորհին Սուլթան Ապիւլ-Աբիւ արքային, իրենց այդպիսի արդարանքը խնայել և խնայելու համար մը շնորհելուն համար: Գիտեք, մեծապէս տէր, թէ փողոցներուն աղտոտութիւնն է մի մեծ պատճառ քաղաքիս օդին աղտոտութեանը: փոխադրելու ընդհանրապէս ժամանակ հոգ տանելով հասարակաց առողջութեան այս ամենահարկաւոր մասին, բոլոր բնակչաց երախտագիտութեան արժանի եղաւ: Տարակոյս չունինք որ ընդհանրապէս անկարգութեան և արգելադրութեան կառավարութեանը այս նշանը գը պիտի ծաղկի և պիտի ազատի այն անկարգութեանն արմը կիսեմ նշանակելու և անխորաքար անխորաքար պատճառաւ:

Ն. Գ. Դահլազեան: "

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մարաքաղաքիս անդրախան գետան Ա. Սըր Հէնրի Պուլլըր երկուշորթի օրը օրոտաւորաւ Ինքնակալին ներկայաւ նալու պատին ունենալով՝ Նիգրոյ Ա. Թադուհէն մէկ ինքնակալի նաւակը մատուց, որով Պուլլըր իշխանին ամուսնութիւնը կը ծանուցանէր վեհապառ Սուլթանին:

Սուլթանը որոշեալ կարգադրութեան համար Պուլլըրին մէջ կազմուած յանձնաժողովին իր պաշտօնը լինելունով յըրուել է, և Նիգրոյ ու Ռուսիոյ կառավարութեանց կողմէն նոյն յանձնաժողովին մէջ գտնուող անդամները Սուլթան մէջ պարտելու եղեր են:

Նիգրոյ շարժու Կատարելութեանը սուրհանդակներն ի վեր և Կահանայի բանով թիւը 800 000 դուրուշի գումարով մը Ա. Պուլլըր գալու ժամանակ Եւրոպայի նահանգին մէջ Եֆէրէ և Չիլիքիսի մէջ տեղերը 28 դուրուշի հանգիւղով գործուեցաւ: Սուրհանդակներն մէկը մեռաւ, մէկը վերադարձաւ: Պուլլըրին մէկն ալ մեռաւ: բայց վերջապէս շարադրեանքը 30000 դուրուշի գումար մը յախապիւրով փախան:

Այս լուրը Արեւիկայի կայսերական ընկիւ Ա. սեմ. Մահմա Ա. Եֆէրէ Եֆէրէին արեւմտեան հասնելով, անմիջապէս Եֆէրէին գնաց և տեղւոյն օտարականութեան դիմադրութեան և բազմաթիւ վնասներ գեղացիներ հետ առաջ՝ աւազակներուն պատրաստան եղած անտար զնաց պաշարեց, և աստիկ կուռէ մը ետեւ՝ գործերն ինքնապիւրով բոլոր գործուած բաները ձեռք ձգեց:

Պախուզայէն մայիս 1 թուով կը գրեն թէ Թիւրքիսի մէջ նոր խառնութիւններ պատահել է:

Կախ թիւը թուով պարտէ թէ Թիւրքիսի տեղական կառավարութիւնը հրաման ըրեր է որ տաճիկներուն փրցուցած յանց գաղացիներ տեղեւ մեծ մը շինուի քաղաքին ծախքով: Այս լուրը Թիւրքիսի չըջակայնքը տարածուելով՝ բազմաթիւ տաճիկ կանայք գէնը աւելր, Թիւրքիսի տաճիկ ժողովրդեան հետ գաղցի միացեր են, որպէս զի յոյնացիք լրջին շինութիւնը խախտան: Բայց Թիւրքիսի մէջ գտնուած կանոնադրութեան գումարները գանձը յրուեր և շատերն ալ բռներ Սուլթան տարեր են, ուր բանտարկուել են:

Մարաքաղաքիս մէջ ժամանակէ մը ի վեր հաստատուած օսմանեան Ոսումանի ընկերութիւնը Չիլիք բազարի թաղին մէջ գաւառին մը բացած է, ուր յառաջիկայ կիրակի օրէն սկսեալ ամեն կիրակի ժամը չորսին արքունի ծառարարականութեան գործը Վահմա Եֆէրէին ձեռքին թուարանութիւնը գաւազակով ձեռքին փափաքողները պէտք է որ որոշեալ ժամէն քիչ մը առաջ հոն գտնուել և արուած գաւազակ սովորելու համար հետեւին մատակարար մը և տեսնուի մ'ալ ունենան:

Նոյն գաւառանին մէջ այսուհետեւ ուրիշ լեզուաց և զիտութեանց ալ ձրի գաւառաւորութիւն պիտի ըլլայ, որոց համար որոշուելը օրերն ու ժամերը հետըզհետ պիտի ծանուցուին:

Ուրբաթ օրը Թիւրքիսի և Քեսովէն ձեռքով բազմաթիւ Գերմանացի ուղեւորներ հասան մարաքաղաք Օսմանեան արուեստահանգէն և ուրիշ երևելի շէնքերը տեսնելու համար:

Իւրիքէն գրուած նամակները կը ծանուցանեն թէ Հոգոսի երկրաշարժէն անպատարար մնացած խեղճ բնակիչներուն գրաւական օգնութիւններ հաւաքելու համար մասնաւոր յանձնաժողով մը կազմուել է տեղւոյն կուսակալ Ահմադ փաշային հրամանաւ, և արդէն հաւաք երկու հարիւր չափ օսմանեան լրադրութիւն հաւաքուել է:

Նիգրոյ լրագրները կը ծանուցանեն թէ անցեալներն Արեւիկա երթող և հա-

մար Լ. իւրուրին մեկնող Նիկիտարոսն առնուն շողեւաւր Եւրիկայի ծովեզերքներուն վրայ ցամաքն ի յնալով, մէջը գտնուող 440 հոգիէն 207 միայն կրցեր են ազատել: Իսկ մնացեալ 233 հոգին շողեւաւր հանգրձ ծովափով եղեր են:

Սերտար Էջրէմ Բարձր: Էջմէր փաշան օգաւորութեան պատճառաւ Երեւանի օրը Պուլլըրին հանգրձին ջուրերը դնայ:

Թիւրքիսի մէջ կը կարգանք թէ առեւտրական գործոց պաշտօնատան կողմէն տաճիկներն նոր շարաքիւթութիւն մը պիտի հրատարակուի, որ արհեստական և առեւտրական օգտակար նիւթերու վրայ գրելէն զատ, առեւտրական գործոց պաշտօնատան մէջ տեսնուած գործերուն և Տաճիկատանի ամեն կողմն առնալ ամեն կատարուած առեւտրական գործառնութիւններուն բովանդակութիւնը և յիշեալ պաշտօնատան վերաբերեալ ծանուցումներն ալ պիտի հրատարակէ:

Բերքապուրէն գրուած հեռագրալուր մը կը ծանուցանէ թէ տեղւոյն օսմանեան գետան Հալիլ պէյը՝ օգոտաւորաւ Ինքնակալին իւր մարաքաղաքն ըրած բարեյաջող վերադարձին առթիւ մեծահանգէս կոչուելը մը ըրեր է, որուն ներկայ գտնուել են արքութեանց դեսպաններն և 300 չափ երևելի ուսուցիչներ:

Սիւլէյմ փաշ շրջող պարահանգէս մը տուել է, որուն 800էն աւելի անձինք հրաւիրեալ են եղեր:

Քանի մը շարաքիւթ ի վեր մարաքաղաքիս և արուստաններուն մէջ յաճախ յանկարծական մահեր կը պատահին:

Նիգրոյ ուրբաթ օր հայտնուելով մը Եւրաքան Սուլթանի արան՝ որ ազնուարար և ուսումնասիր անձ մ'էր, Լանկայի յունաց Ա. Թարոս երեւելու փողոցին մէջ կաթուածահար ինկաւ և Պուլլըրին հայոց Պատրիարքարանի փոխադրուելով, թիւրքաւ ամեն պէտք եղած դարմաններն ի գործ դրուեցաւ, բայց ճար մը չըլլալով հետեւեալ օրը իւր մահը կանոնուի կնքեց 39 տարեկան հասակին մէջ, յանձնարար սուր իւր թաղիցի և մանաւանդ տարաբաղ ծնողացը՝ որոց ծնրութեան նշանակելու միջոցով ծնունդ էր:

Տաճիկատանի մէջ բանգահի մշակութեան օր բոս օրէ ծաղիկեւն վրայ տարաւոր չէ մնացած: Նիգրոյ Սահմանութեանը կը տեղեկանանք որ 1861ին վրայ հարկը երեւելու երկրէ կենդանար բաւազակ փոխաւրուած է Տաճիկատանին Նիգրոյ 1862ին այս գումարն երած է մինչև 42 212 կենդանակ, իսկ ներկայ տարւոյս արդիւնքը ձեռնհաս անձանց կարծածին նայելով՝ 100 000 պախայի կամ 700 000 կենդանակ ըն պիտի ելնէ, ուսից յայտնի կերել թէ քիչ ժամանակի մէջ Տաճիկատան մեծ յառաջադիմութիւն ըրած է մշակութեան այս կարեւոր ձիւլին մէջ ուրիշ երկրներու հետ բաղադատելով:

Նիգրոյ հասարակաց կրթութեան պաշտօնեան Նիգրոյ ժողովրդեան կրթական վիճակին վրայ տարեկան յայտադիր մը խորհրդարանին ներկայացնելով, կը տեսնուի որ Նիգրոյ ժողովրդեան 100 ին 11 մանչ և 100 ին 18ը աղջիկ գրել կարգալ չեն գիտեր: Իսկ Լ. օնարայի մէջ կարգալ գրել չգիտցողներուն թիւը հարիւր ին վրայ հալել կենէ: Այս տեղեկութեան զատ նոյն յայտադրին մէջ կը տեսնուի, որ անցեալ տարի Նիգրոյ մէջ 696000 ծնունդ եղեր է, որոնցմէ 44157 ին հոյն անձանց թէ եղեր, և նոյն տարին 405 000 ալ մարդ մեռեր է՝ մեծ մասը հասուն հասակի մէջ:

Այս օրերս Պաղլոյ մէջ տարաւորով երկրագործական նոր մեքենայ մը հնարուել է, որ վրայ ձիւ ոյժ ունի և չորս հոգով կը կառավարուի եղեր:

Չիլիք մեքենան Պաղլոյ Ա. Կահանայի կայսեր ներկայութեամբ փորձը:

ւերով տեսնուել է որ մէկ օրուան մէջ քառասուն հոգի տեսնուելը դարձ կը կաւարէ խնամ կանոնաւոր և գոհացուցիչ կերպով. հետեւեալը մեծ գոյութեան առիթ եղեր է :

— Մեզից լոգանալները կը ծանուցանեն թէ Լատարայի երկրագործ մը շահներուն մեծ մասը ունի ժողովրդէն համար Զէյթունայի նոր կղզին գաղաթ ըլլալով, երկրագործութիւնը երեսի վրայ մը նստելով Լատարայի մէջ, և հետեւեալը Լատարայիցիները մեծագոյնը բնական զրկեր են Մեզից, որպէս զի ան գործ մնացած բանալի գործաւորներէն ուղիղը Լատարայի կը մնայ : Այս բանիս համար Մեզից մէջ ալ գրամական օգնութիւններ հաւաքուելով և կառավարութիւնն ալ ամեն մէկ գաղաթին 5 լիւր տարու յայտարարութիւն ընելով, մէկ շաբթուան մէջ ութ հազարէն աւելի գործաւոր Լատարայի կը մնայ համար դըրուելու :

— Յունաստանի կառավարութիւնը վերջին օրերս Մեզից մէջ փոխառութիւն մ'ընել որոշելով, թէ այսօր փոխառութեան թիւնքն և թէ Յունական եօթն կողմէն ընդ 60 000 000 տրակի պարտքին 300 000 000 տրակի չափ պարտք պիտի ունենայ Մեզից, որուն համար տարին 15 000 000 տրակի առիտ պիտի վճարէ, որ կը դրամական կարողութիւնէն շատ վեր է :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԵՐՍԵՐԻ ԵԷՆՈՒՏԻ

ԵԱՆԻ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

Գաղղիացի Լոթէն Սիւ անուն հրաշակաւոր մատենագիրն այս երեւելի հեղինակութիւնը որ գրեթէ ամեն ազգաց լեզուա թարգմանուած է, Սիւնատի Լիւ ձիւս գաղաթեալ լրագրին խմբագիր արգոյ Պ. Կարապետ Գանդուսեան հայերէն տառերով տառերէն լեզուի թարգմանաւ նա՞մ տեղի առ տեղի հեղափոխեալ հրաշակաւոր սխաւ, և արդէն առաջին տետրին ալ ելած է քառասուն զիջով և մնացորդ ապագութեամբ :

Թափառական հրեայի ամբողջին գիրք 2 օսմանցի լիւր է, մէկը կանխիկ, միւսը գրքին կէսը տպուած տան հաւաքուելով :

տուեցանք. մէկ տարւոյ 16 երեսէ կը բաղկանայ և 100 փութի պիտի ծախուի. իսկ դաւաններու համար միայն 40 դուրու ձեւով ծախք պիտի առնուի : Արհատարարութիւն ամեն հինգշաբթի օրերը ստորագրութեան տեղերն են Պ. Պօլիս Պարագի խմբին վերնայտիւր Պ. Պ. Փանոսեանին 1 թիւ սենեակը : Իսկ դաւաններու գործաւորներն են, Իդմիր, Մանուկ աղա Խաչիկեան, Խաչիկ, Թուրոս աղա Յօհաննէսեան, Պրոսպ, Կարապետ աղա Փափաղեան : Կեսարիա, Յակոբ աղա Փանոսեան :

ՆԱԽՈՒՑՄԱՌՆԵՐ

Չարմաթըլար փողոցին վարի ծայրը Լոթանգաճի Պ. Յօհաննէսեան Մատաճի Պ. Յարութիւնին հետ ընկերանալով, կը ծանուցանեն հասարակութեան որ թէ՛ հարմիրներու և թէ՛ որ և ինչ կոչուեցնեն համար ամեն տեսակ սեղանի սղաւներով ծառայելու և թէ զանազան կերակուրներ խմորեղէններ և անուշեղէններ եփելու և միւսեղանային սեղանին ծառայութիւնն ընելու պատրաստ են, և կը յուսան որ թէ՛ գիւրդուութեան և թէ՛ մնացորդեան մասին գոհ կ'ընեն պէտք ունեցողները, որոնք ամեն օր կ'ընան տեսնուել իրենց հետ վերոյիշեալ Լոթանգաճի :

Երանայեալներուն վերի ծայրը մահալէսի խմբութիւն վան միւլը թէլիսի Մաթոսեան Պ. Պ. Յակոբ խմբութիւնը բացած է, ուր որ և ինչ սեղաթ ըստացուածք մը ծախել կամ գնել և կամ ուրիշ անշարժ ստացուածքի կամ որ և ինչ ապրանքի հետ փոխանակելու գործը ներքին ծառայելու պատրաստ է : Ուստի կը ծանուցուի հասարակութեան որ այն պիտի պէտք մը ունեցողները վերոյիշեալ տեղին ամեն օր կ'ընեն կ'ընան գնել, և պէտք եղածը անոր հետ խօսիլ :

Պէշիկթաշի Հայկազեան ընկերութեան արդեամբ տպուած գրքերը :

Եռաճնորդ Հայ ընթերցանութեան կամ նոր քերական և հեղարան. գին մէկ դուրու : Պարտք տուողը գին 4 դուրու : Կախաղկաւոր մանկանց գին 3 դուրու : Թափառականութիւն համառօտ գին 3 դուրու :

ընդ : Քերականական վերլուծութիւն գին 6 դուրու : Կոր Քերականութիւն Գարագաշեան գին 8 դուրու : Մոլոթի Պարտք վերլուծութիւն գին 3 դուրու : Բարդալեան Պարտքեայ Հատոր Բ. գին 2 դուրու : Կոր Հատոր Գ. գին 3 դուրու :

Ար ծախուի Պ. Պօլիս գրախմբա Պ. Յարութիւն Մարդարեանի խմբութիւն :

Յարմարեալ լեզուա առեւտրական նամակներու պէտք ունեցող արդոյ վաճառականներուն կը ծանուցուի, որ նոյն պաշտօնը չափաւոր գնով վրան առնելու պատրաստ և յարմար անձ մը կայ : Պէտք եղած տեղեկութիւնը կ'ընայ առնուելու ըրազրոյս գրասենեակէն կամ մեր գլխաւոր ցրուիչէն :

ԻՐԱՄԻՒԼ ԸՆԴԵՆ

Գաղղիացի բժշկական ձեռնարանը բաղաժախ համեմատական փորձերէ ետեւ հաւեցաւ այս Քարսիւններուն և իր մէկ հրապարակական նստին մէջ հրատարակել որ ուրիշ ամեն Քարսիւններէն գերաւանց է :

Երանայեալ գիւրդու կը կըլուին որ առնեն փափուկ կոկորդներն անգամ կը խորեն, ստամոքսն ալ չեն յոգնեցընէր : Փայրիկ գաղաթի հիւանդութեանց հիւանդանոցին մէջ գարմանուած 100 հիւանդներու վրայ բժշկական ձեռնարանը 100 բժշկութիւն ձեռք բերաւ այս Քարսիւնով : Հատուկ երկու սրտակ (Ֆըլըքս) բաւական եղաւ, օրը 15-20 Քարսիւն արուելով, կէսը առաւօտուն ծով բերնուց, կէսն ալ իրիկուն ձաշէն ծով մը առաջ : Եւս գեղին վրայ աւելի մանրամասն տեղեկութիւն ստանալու համար պէտք է կարդալ ամեն մէկ սրտակի հետ գրուած տեղեկագիրը :

Ար ծախուի Փարիկ Ֆոպուս Սեն Տրիկ փողոցը թիւ 80, և Պ. Պօլիս Բերայի մեծ փողոցը թիւ 80-ի վարի կողմը թիւ 485 Բերայի լեռնէն Դէնեալի անօրէն Ս. Մէք. Բերայի գրասենեակը ուր կը գտնուի նաև Երանայեալի խորան (եպր) ու թուղթը որ 40 տարիէ ի վեր Գաղղիացի ամեն գլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած է :

Եւս գեղին և խորանին խորագրեալ և շինծու նմաններն գոյուշանալ պէտք է :

ՄՕՆԻԹԵՐՈՒ ԻԼԼԻԽՍԹՈՒԷ

ՏԵՂԵՆՎԱՆՍԻՍԻՍ

(Գիւտերու պատկերազարդ Մօնիթըր)

Այս լրագիրը փարիկ կը հրատարակուի ամիսն անգամ մը 32-40 երես տարակի ձեւով, որ տարւոյն վերջը մեծ ութանկ հատոր մը պիտի կազմէ երկիւղեալ :

Նոր գիւտերը կը հրատարակէ և նորաճընար մեքենայներուն պատկերները կը ներկայացընէ հանդերձ բացառութիւններով :

Ստորագրութեան գինն է Կ. Պօլիս համար տարեկան 28 ֆրանք. ստոր վրայ 7 ֆրանք ալ աւելցնելով գիւտաց արածողներուն Մօնիթըրն ալ կ'ստացուի, որ ամեն ամիս կը հրատարակուի 46-22 երես տարակիով :

Ստորագրութեան անոնէ Կ. Պօլիս Բերայի լրագրէն Ժէնէպի անօրէն Պ. Մէքէրիկ գրասենեակ, Բերայի մեծ փողոցը թիւ 80-ի վարի կողմը թիւ 485 :

ՕՏԷԼՔՓԼՕՐԻՏ

ՄԱՋԵՐԸ ԶՕՐԱՅՐՆՈՂ ԵՒ ԱՆՈՆՅՐԱՄԱՆ ԴՈՅՆԸ ՊԱՆՈՂ. ԶՈՐ ՄԸ :

Եւս ջուրը շատ տարբեր է միւսէն. հիւանդանոցաւ ջուրերէն ու հեղուկներէն ներկ չէ, այլ մաղերուն բնական գոյնը կը ներկուի :

Օգտակար և անմիտ բոյսերէ շինուած ըլլալով, այս ջուրը կարգէ դուրս յատկութիւն մը ունի ձերմկեցած մաղերը զօրացնելու, գրեւոր մաքուր պահելու, գոյացած թեփը ջնջելու, մաղերը շատընելու և թափելուն առաջին առնելու :

Մէկ շէշը 10 ֆրանք է :

Ար ծախուի Փարիկ Կիւլէն գեղաւորէն խմբութիւն Ուիլիս փողոց թիւ 112, և Պարիս Մօնարթը 21 :

Կ. Պօլիս Բերայի մեծ փողոցը թիւ 80-ի վարի կողմը թիւ 485 Ս. Մէքէրիկի լրագրի :

Խիստ ընտիր ստաւառայի խիւլանային որն որ փորձով շատ օգտակար գտնուած է շատ տեսակ արտերու, զորքիմասի գլխաւոր վերը, սրածաւ, թուղթ պարզամայալ, թէ ներքին և թէ արտաքին գաւազան վերքերու, և արեան արականութեան յաւաք եկած ամեն տեսակ հիւանդութիւններուն :

Ար ծախուի Գալաթիա թիւ 17 Լիւմեր փողոցը Երանայեալի մաղադան :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԳՐԱՄՈՑ ԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Կ. ՊՈԼԻՍ	Շաբ. 4	Բ. 6	Գ. 7	Դ. 8	Ե. 9	Բ. 10
44 ՄԱՅԻՍ	1.12	1.12	1.12	1.12	1.12	1.12
Օսմանեան լիւր Մէք. . .	10 1-10	10 1-10	10 1-10	10 1-10		10 1-10
Քանանաց արծաթ . .						
Թահի. Սումիտաղէ . .	64	64	64	64	64	64
Էսամը ձէպիտէ հին . .	55-10	55-10	54	54		54
« « նոր . .	55	55	55	55	55	55
« « Վերջին . .	57-30	57-30	58-28	58		58
Սերիկ 40 ար. տիւ. առ .	46-20	46-20	47	47		48-20

ԱՐՄՏԻՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 44 ՄԱՅԻՍ

Յօրեն թայլան	Յօրեն խմբային կալուղ
« Խմբային 54-52	» Վարնա » 26-28
» Կալուղ —	» Պարզաղ » —
» Բուլիկ Պալլէր —	» Պալլէր —
» Սաման 27-28	» Երկրագործներ խմբային —
» Արօք կալուղ —	» Խալալիլ —
» Խալալիլ » 25-27	» Գարի — 9-10

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Գետոր (Մաղը) 400 լիւր	42
Ճերմակ	—10
Գեղին հատիկ (ձէպիլ) 400 լիւր	—10-30
Բուրդ Գրեթէ կէս լուր	—8
Ճիւղաւոր 400 լիւր	—6
Տաճկաստանի 400 լիւր	—9
Բամպակ Գրեթէ-Աղաճ և Գասապալ 400 լիւր	—17-20
Ստոր. Կիւրա. Ատանա	—19
Թիֆլիսի Լիւրի Զանիլը 400 լիւր	—56
Լիւրի Զանիլը	—253
Բիւրէն ընտուած	—14
Տերու	—26
Մեղ ընտուած Զրապիղան 400 լիւր	—29
Արտաղ	—28

Ստոր Բուլիկի	Հօխայ	— 2-30
Կառաւարի հոնա (Գեթիլի թիւ) Բուլի		40
Պանարաւ »	»	— 44
Զէթ (Զէթիլի կաղը) Արալը	Հօխայ	— 6-30
Կիւրա »	»	— 6-25
Աճառ (Աստուր Գանալա »	»	— 6
Սիւրիլի »	»	— 4-20
Բերնի Երկրագործ Բէշիլ »	»	— 2-30
Տիւրալ »	»	— 2-22

ՄԵՏԱՔՍ

(ԻՓԷՐ)

Յիւրիլի 40 — Եւ 41-12	410 — 120
Խաղաղ Պրոսպ չոր	90 — 100
Պարալաւանի ֆրանք	42 — 45-48

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խալիլի Ռիւ և Գալի	400 լիւր	900 — 1100
« Մարիլի և Սէլան »	«	— 1200
Շաբար Գլ. (Զէթիլ) 6-10 Լուր	«	218
« Փոշի (Թօղ) »	«	270
« Հոլ. Գլուր »	«	217
« Փոշի »	«	263
« Գաղղ. Գլուր »	«	215
« Փոշի »	«	775
Անաղ (Գաղղ) »	«	— 6
Պարիկ (Գլուր) »	Հօխ. 400 լիւր	«
Լիւրի (Գլուր) Պէշիլ »	«	«
« Մարա »	«	«
Որդան կարմիր (Գրեթէ) »	«	«
« « « արծաթ »	«	«
« « « տեսակ Բ. »	«	«
« « « Խմա »	«	«
Արտաղ (Ներքաղ) »	Հօխ. 400 լիւր	«
Պարիկ (Զէթիլ) թիւ 0 և 00 »	«	445
Կաղար (Գրեթէ) »	«	— 5-10
Թիֆլիսի (Թէթիլ) Գրեթէ մոտ »	«	— 290
Չին. Գրեթէ մոտ թիւ 7-12 »	Հօխ. »	— 4-10
Երկրի Սիւր. Զորաձիւ (Հոսպոլ) »	Կիւր. »	55-54
« Բիւրի »	«	58-60

Տախտակ	«	— 92
Տ սլտրակ	«	450
Ռուսիոյ	«	— 450
արգիլիճա	վարիլ 59 շիւր.	— 105
Ծածկ (քլուքլուր) Խալիլ	Կիւր.	
Խիլիսպէճ	«	255
«	Պէշիլ	«
«	«	440
«	Թրիլիս	«
«	«	80
«	«	45
«	«	42
«	«	20
«	«	46

Աս լրագիրը շաբար անգամ մը կ'ընէ շաբար օրերը Ով որ կուգէ կրնայ ստորագրել, Կ. Պօլիս Զիւրիլի խմբի լրագրոյ գրասենեակը : Իսկ զորքերը հոգաբարձուներն են :

ԻճՄԻՐ. Յօհաննէս աղա Մազուտեան. ԵԳԻՊՏՈՍ. Շաբար աղա Արիկեան. ԱՆԴՐԵԱՆՈՒՊՈԼԻՍ. Մանուէի Սուրիա աղա Գալուտեան. ՏՐԱՊԵՆՈՒ. Պ. Խալաւուր Երանայեան. ԹՈՒՍԱ. Գետը և Յօհաննէս աղա Արիկեան. ԿԱՐՏ. Կարապետ պատուէի Զարաբեան. ԱՍԱՆԱ. Կարապետ աղա Շապալեան. ՀԱԼԷՊ. Դիլիգայու աղա Տէր Մարգարեան. ՆԻԿՈՄԻԴԻԱ. Պ. Տ. Մարապեան. ԹԵՔԵՐԱՆ. Յարապիւն աղա Պ. Շապալեան. ՎԱՆ. Դիլիգայու աղա Խալաւուտեան. ԽԱՐՏԵՐԻ. Պ. Գետը և Շապալեան. ԵՐԶԱՆԱ. Բերեքապիլի Թաղապարհ : ԱՍԱՐԱՍԱՐ. Մանուէի Յակոբ աղա Տ. Դիլիգայու. Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ուղղուեցրը՝ այս տեղէնքն մեկուն հետ կրնան բոլորակիլ :

Օգնական Խմբային	Խմբային-Տնօրէն
Ա. ՄԻՋԴԱՏ ԳԵՈՐԳԵԱՆ	Կ. Ս. ԻԹԻԻԶԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ	Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ